

ՄՄԹ.

Վաւերագրիս ստորագրող Միարանք որ Մանաստանի մեր վանատունը երթալու համար թրիեստէ կ'անցնին, զմայլելով այս վերջնոյս ներքին և արտաքին զարգացման վրայ՝ ընդարձակ տեղագրութիւն մը կ'առաքեն առ Մեղգոնեան Աբրահայր: Իրենց կողմանէ խորհուրդ կու տան, նկատելով շատ մը նպաստաւոր պայմաններ, որպէս զի Միարանութիւնս ամէն ուրիշ տեղերէ առաջ՝ թրիեստի մէջ ապահովէ վայր մը: Նոյն ատեն չէ իրագործուած այդ առաջարկը, բայց այդ կանխագիտութիւնը ծառայած է օրուան թուականէն վեց տարի վերջ Ս. Ղազարէ արտաքսուող երկու միարաններու, այն է Հ. Ա. Պապիկեանի և Հ. Մ. Գասպարեանի, որոնք իրենց առաջին կայան հաստատեցին թրիեստը և հոն սկսան իրենց անջատ գործը:

Այս թուղթին մէջ կը խօսուի նաև Պիղատոսի դատավճիռը կրող մագաղաթի մը գտնուելուն վրայ, որ անշուշտ բոլոր քրիստոնէութիւնը, ամբողջ աշխարհը պիտի հետաքրքրէ՝ եթէ իրօք մէջտեղ ելլէր այդ բնագիրը: Նամակագիրը կ'ըսէ որ անոր օրինակութիւնը միասին դրկեր է առ Մեղգոնեան, բայց մենք չգտանք զայն: Սակայն ունինք ի Չեռագրատան Վանացս զբնագիր մեծկակ թուղթ մը՝ (Խմբ. ԻՊ. թիւ 10) հետևեալ խորագրով. « Ճշմարիտ Պատկեր և օրինակ Աւերա դատաստանին « ընդդէմ Քրիստոսի, որ ի վեհեայ ի ներքոյ կրկրի ի վեհ քանդակիս զտաւ և ըստ « այնմ գաղափարի՝ զՊատճէն օրինակագրեցար՝ առանց այլայլութեան, որ է այսպէս... »: Ինչպէս կը ծանուցուի թուղթիս ստորոտը՝ ասիկա հրատարակուած է ի Ս. Բեդրպուրկ 1784 յունիս 8-ին, և ասոր ընդօրինակութիւնն է մեր այս ունեցածը: Արդեօք 1765-ի նամակատուփէն ելած մեր անթուական հետևեալ վաւերագրին ակնարկածը սկզբնական բնագիր ծառայած է իրմէ 20 տարի վերջ լոյս տեսնող մեր զբնագրի բնագրին. հնախօսական քննութեան կարօտ հարց մ'է այդ:

Պերագատիւ սրբոյ ձոր մերոյ խոնարմութեամբ յամբուրեմք զայս

Ի մայիսի 16, իբր ի 15 ժամու հասաք ի թրեսթ...: Յերկրորդ անուր հասանելոյ մերոյ ի թրեսթ, այսինքն ի շաբաթու՝ ներկայացաք Վիքարի եպիսկոպոսին խնդրել հրաման պատարագելոյ...: Եպիսկոպոս քաղաքիս է Չերմեռանդ ոմն և սրբակաց, որոյ և դէմքն ցուցանէ. զորոյ զպատարագն տեսաք յօր պէնտէկոստէի: Եւ սաքրիստան եկեղեցւոյն ուր պատարագեաց՝ պատմեաց թէ յաւուրս յայտոսիկ ի գնալ եպիսկոպոսին ուրեք երիվարաւ, անկեալ է երիվար նորա, ընդ նմին և ինքն, և ոչինչ փաս լեալ է նմա: Այլ և խօնախ աղաչայ խաչատրին պատմեաց՝ թէ երիս խնդիրս առաջարկեալ է եպիսկոպոսն սրբազան աթոռոյն և կայսեր. 1. զի յաւազ հինգշաբթի և յուրբաթու և շաբաթու հրէայք բնակեալք ի քաղաքիս՝ փակեալ կացցեն, և մի երեւեցին ամենեին. 2. զի յամենայն հրապարակական հանդէսս և թափօրս, նոյնպէս փակեալ կացցեն և մի երեւեցին. 3. զի քրիստոնեայք մի լիցին ծառայք և աղախնայք: Եւ ասացեալ է եպիսկոպոսն՝ եթէ ընկալցին զխնդիրս զայտոսիկ՝ կացից յեպիսկոպոսութեանս, ապա թէ ոչ՝ հրաժարիմ և գնամ դարձեալ ի վանս իմ, զի խիղճս ոչ տանի, զի է կրօնաւոր ի կարգէ կարմելիղանաց. այժմ սպասէ պատասխանոյ: Վերոյսացեալ սաքրիստանն զայս ևս պատմեաց՝ թէ չորս ամօք յառաջ յորժամ եկն այս եպիսկոպոս յայս քաղաք, ցանկացեալ է տեսնել զամբմին սուրբ եպիսկոպոսին կարասիտի, և բացեալ են զտապանն, և տեսեալ են զամբ-

1. Չիկայ օրինակոյն անունը: